

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկի.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Ապրիլի 29-ին, Վերին-Ալուրիում վախճանվեց

ԵՒԳԵՆԻՆ ԶԱԿՈՒԵԱՆ ՄԻԼԻԲ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑ

Հանգուցեալի ամուսին Գարեգին եւ տագրերը՝ Բրիտաֆոր եւ Մկրտիչ Մէլք-Մարու-
թեանցները իրանց ամուսիններով յայտնում են բարեկամներին եւ ծանօթներին, որ
կիրակի, մայիսի 7-ին, պատարագից յետոյ, 12 ժամին կատարվելու է հոգեհանգիստ
կուկիայի ս. Աստուածածին եկեղեցում, Վորոնցովի արձանի մօտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսից Եսէր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ. Նամակ Ախալքալաքից. Նամակ Ղազարի
գաւառից. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Յը-
րանսիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՎԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Ցաւերի ցուցակից:

ՊԱՐՏԻՑ ԾԱՀԸ

Վաղը, մայիսի 7-ին, մեր հարեան եւ
բարեկամ երկրի միապետը, Պարսից Մու-
զաֆէրէդդին-Շահը ոտք է կոխում ռու-
սաց հողի վրա:

Ողջունելով Իրանի Շահնշահի մուտքը
և բարի գալուստ մաղթելով, մենք ան-
կեղծ համակրութեամբ ցանկանում ենք,
որ Նասրէդդին Շահի յաջորդի առաջին
այցելութիւնը Ռուսաստանին և նրա ճա-
նապարհորդութիւնը քաղաքակրթ յե-
րոպայում առանց բարեբար հետեւանքի չը-
մնայ այն երկրի բարոյական վերածնու-
թեան համար, որ Արեւելքի ամենահին
պետութիւններից մէկն է կազմում և որի
ժողովրդի մեծ մասը, իբրև արիական
ցեղ, հին պատմութեան մէջ նշանաւոր
դեր է խաղացել:

Պարսկաստանը կազմում է Ռուսաստա-
նի հետ ոչ միայն քաղաքական, այլ և
պատմական ու տնտեսական էական շահե-
րով: Միև կողմից նա իր ծոցում պարու-
նակում է բնական այնպիսի նշանաւոր
հարստութիւններ, որոնց շահագործումը
կարող է մեծ զարկ տալ ամբողջ երկրի
տնտեսական և առևտրական զարգացման
և նիւթական բարգաւաճման հետ միա-
սին առաջ բերել մտաւոր ու բարոյական
վերածնութիւն: Այդ բնական հարստու-
թիւնները շահագործելու և նրանցից
օգտվելու համար, ինչպէս և Ռուսաստանի
հետ ունեցած առևտրական գործառնու-
թիւնները աւելի ընդարձակելու համար,
անհրաժեշտ է բարեբար ու կատարելա-

գործել հաղորդակցութեան միջոցները,
ճանապարհներ ունենալ, երկաթուղու-
գծեր անցկացնել կենտրոնական և արդիւ-
նաբերական տեղերի միջով, գործարաններ
հիմնել և չը խորշել առհասարակ քաղա-
քակրթական միջոցները:

Հանգուցեալ Նասրէդդին Շահը և նրա
զլխաւոր խորհրդական մեծ վիզիրը, ներ-
կայ Մաղրազամը, շատ լաւ ըմբռնել էին
այն միտքը, թէ մի կողմից ամրապնդելով
անկեղծ բարեկամական կապեր Ռուսաս-
տանի հետ, միև կողմից լայն դուռը բաց
անելով եւրոպական քաղաքակրթութեան
առաջ և հեշտացնելով նրա մուտքը Պարս-
կաստան, կարելի կը լինի իրականաց-
նել Պարսկաստանի բարոյական և կուլ-
տուրական վերածնութեան գործը գէթ
ոչ հեռաւոր ապագայում: Եթէ Նասրէդ-
դին Շահը չը կարողացաւ իրականացած
տեսնել իր յոյսերը, գոնէ նա հիմք դրեց
և այդ հիմքի վրա շինութիւն կառուցա-
նելը թողնած է նրա յաջորդին, որն այսօր
հիւր է գալիս մեզ մօտ:

Եւ Մուզաֆէրէդդին-Շահը իր շրտա-
մեայ թագաւորութեան ընթացքում աշ-
խատել է, որքան ներքեւ են երկրի պայ-
մանները, Տեառել հօր ծրագրին: Այդ
ծրագրի մի մասը նոյն իսկ իրադրծված
է: Ռուսաստանի հետ բարեկամական կա-
պերը այնքան ամրապնդված են, որ այ-
սօր ռուսաց ազդեցութիւնը Պարսկաս-
տանում վերջնականապէս հաստատված է,
իսկ մի քանի ամիս առաջ կնքած փոխա-
ռութիւնը միջոց տուեց պարսից կառա-
վարութեան դուրս գալ իր տնտեսական
և ֆինանսական ճգնաժամից և մտածել
երկրի մէջ մի քանի անհրաժեշտ վերա-
նորոգութիւններ մտցնելու մասին: Այդ
կողմից Ռուսաստանը մեծ ծառայութիւն
արեց Պարսկաստանին և այժմ ևս առա-
ջարկելով իր օգնութիւնը երկաթուղիներ
անցկացնելու համար, ինչպէս և շինելով
Էնդէր-Աւազլիներն խձուղին, նա, ան-
շուշտ, ահազին զարկ տուեց և կը տայ

երկրի տնտեսական և առևտրական զար-
գացման:

Եթէ Ռուսաստանի այդ բարեկամական
օգնութեան հետ միասին, Պարսկաստանի
ներկայ վեհապետը կարողանայ, ինչպէս
որոշել է, իր եւրոպական ճանապարհոր-
դութիւնը կատարելուց յետոյ, մտցնել իր
երկրի մէջ հաստատ, որոշ օրէկներ,
կազմակերպել վարչական և դատաստանա-
կան հիմնարկութիւնները եւրոպական ձե-
ւով և դրանով ապահովել արդարադա-
տութեան գործը, ու զարդներ հիմնել,
ոչ մի տարակոյս չը կայ, որ հին Իրանը
կարճ ժամանակում կարող է վերածնվել,
զարգանալ տնտեսապէս և մտաւորապէս:

Շահի ներկայ ճանապարհորդութիւնը
պէտք է նկատվի իբրև սկիզբ այդ ծրա-
գրի իրագործման, և մենք անկեղծ սրտով
ցանկանում ենք, որ այդ ճանապարհոր-
դութիւնը աջողութեամբ պսակվի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ինչպէս յայտնի է, նկարիչ Ալվազովսկու հետ
միաժամանակ մտաւ ևս ռուսարական նշա-
նաւոր նկարիչ Մուսիլայի: «НОВОСТИ» լրագիրը
«Մեր անկուլտուրականութիւնը» վերնագրով
յօդուածի մէջ ցոյց է տալիս այդ երկու մանրի
վերաբերմամբ երեւան եկած հասարակական
տրամադրութեան տարբերութիւնները:

Մեռա Մուսիլայի, եւ Ռուսարիան սգի
մէջ թողնեց. ցնցվեց ամբողջ երկիրը, ամ-
բողջ երկիրը միանգամից զգաց, որ իրանից
հեռապա մեծ մարդը—եր փառքը, իր պար-
ծանքը: Մեռածներին հարկաւոր չեն թաղ-
ման պատիւները, բայց կենդանի մարդիկ
զգում են մի անդամազրկել պատճառով որ և
է կերպով արտայայտելու իրանց յուզող վըշ-
տայի զգացմունքը, նրանք զգում են ցան-
կութիւն վերջին անգամ հրաժեշտ տալու
գոնէ այն մարմնեղէն պատեանին, որին կեն-
դանացում էր հետագայ ողբի, եւ մի ընդ-
հանուր զգացմունք միացնում է բոլոր դա-
սակարգերի եւ զիրքերի մարդկանց, կազ-
մում է մի անբաժանելի միութիւն, որ կայա-
ված է զգալի արուեստը, զգալի մարդկային
ոգու ստեղծագործող ոյժը ունեցած մի ընդ-
հանուր սիրով:

Ինչի նշան է այդ համազգային համակ-
րանքն ու վշտակցութիւնը:—Կուլտուրական ա-
ռաջադիմութեան նշան, պատասխանում է յօ-
դուածագիրը:

Երբ ոգու ստեղծագործութեան մեծ ներ-
կայացուցչի կորուստը պատճառում է ժողովր-
դական համասփիւռ վշտի պայթիւն, դա նը-
շանակում է թէ այն ողբին, որ կենդանաց-
նում էր մեծ մարդուն, յուզում է նաև նը-

րան յարգողների սրտերը, նշանակում է թէ
այդ ողբն չէ հեռանում նրանցից, թէև
մեռնում է նա, ով այդ ոգու ամենալաւ ար-
տայայտիչն էր, նշանակում է թէ աչքի ընկ-
նող մարդը թողել է իր քաղաքակրթների
սրտում այնքան խոր հետք, որ դրանով յաղ-
թանակ տալու մասին վրա եւ այսպէս,
Մուսիլայի հանդիսաւոր թաղումը, որի մա-
սին հաղորդեց մեզ հեռագիրը, վկայում է
կուլտուրայի այն բարձր աստիճանի մասին,
որի վրա կանգնած է Ռուսարիան:

Այժմ դանք մեզ մօտ:
Մեռա Ալվազովսկին, և լրագիրների մէջ
երևացին դժգոյն համակրական մահացու-
ցակներ, իսկ պատկերազարդ յաւելածների
և շարժաթերթերի մէջ ապօրինի, նկարչի
պատկերը: Սգի մէջ մտաւ ոչ թէ Ռուսաս-
տանը, այլ Թեոդոսիան, որ չէր կարող չար-
տայայտել իր կեկիծը, քանի որ Ալվազովսկին
տուել է նրան ջրանցք եւ, առհասարակ,
չառ նպաստել է այդ քաղաքի ծաղկման
եւ քաղաքը աննորակալ չը մնաց ու յայտ-
նեց իր յարգանքը Ալվազովսկու: Բայց
դժուար է ասել թէ ում էին մատուցել
յարգանքները,—արեօք հարուստ մարդն,
որ քաղաքի բարեբարն է եղել, թէ ծովի
բանաստեղծին, որ ռուսական արուեստի
պարծանքն է: Ոչ, մենք չը գիտնեք գնա-
հատել մեր հոգեկան գանձերը: Անկուլտու-
րական ենք մենք, մինչև ևս ոսկորների ծուծը
անկուլտուրական: Ինչպէս հարստացած բու-
ժուան անմտաբար թափառում է իր ձեռք
բերած իշխանական պալատներում, որոնք
լի են արուեստի դարաւոր գանձերով, և
չէ զգում թէ այդտեղ ինչն է լաւ և թան-
գաղին, այնպէս էլ մենք ենք անտարբեր
նայում հոգու ստեղծագործութեան մեր ներ-
կայացուցչին: Եւ թէ ողջունում ենք
նրանց, դա այն պատճառով է, որ ընդուն-
ված է այդպէս անել, այսինքն ողջունել նը-
րանց: Մենք յաճախ պարծենում ենք մեր
նկարիչներով, գործներով, երաժշտագէտնե-
րով, գիտնականներով, բայց մեր հոգու խոր-
քում մենք միայն մեր անսովոր զիջողակա-
նութեամբ ենք թող տալիս, որ նրանք գո-
յութիւն ունենան: Մենք միայն համբերող
ենք նրանց վերաբերմամբ:

Իսկ լաւ է, եթէ միայն այդքան լինի,
կաւեղանքն ենք մենք մեր կողմից: Լինում է ևս
աւելի սարսափելի վերաբերմունք, որ այժմեան
ժամանակ գուցէ բոլորովին անհետացել է ռուս
հասարակութեան մէջ: Դա այն է, որ մենք
նոյն իսկ գիտենք սովորած անել այդ գործիչ-
ներին, որոնց անունը, սակայն, կարողանում
ենք մի մի արտասանել հպարտութեամբ, երբ
ազգային պարծենկոտութեան տրամադրու-
թիւնն է մեզ այցելում: Ապրիլ մեռած նշանա-
ւոր գործիչների հետ, զգալ նրանց ներկայու-
թիւնը մեր մէջ, սովորել նրանցից, ոգևորվել
նրանց օրինակով—այսպիսի առաքնութիւն
մեր մէջ դեռ չը կայ և չէ զարգանում: Բա-
ւական է, որ իդէալի ներկայացուցիչ գործիչի
զերեզմանի վրա մի կամ երկու տասնեակ տա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՑԱՒԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ

I

Ինչի է նման հրաշալի լճակը իր բերեղա-
նման ջրով, եթէ նրա մէջ սիրուն ու անուշ
ձկների փոխարէն վիտուս են միայն գորտերի
զգուելի երամները: Ինչի է նման կանաչազարդ
պարտէզը իր հրապուրիչ տեսքով, իր դաւա-
մարգերով ու ստուերայառ ծառերով, եթէ ցե-
րեկով միայն օձերն ու մողեսներն են շրջում
նրա ծառուղիներում, իսկ գիշերը բուռի աղա-
ղակն է միայն լսվում ծառերի զազաթից: Ինչի
է նման հոյակապ մարմարեայ տունը իր ոսկե-
զօծ պատ և առաստաղով, եթէ նրա մէջ թա-
զաւորում է անձուռի մարդակերների մի խառ-
նիճաղանձ բազմութիւն: Նմանապէս ինչի է
նման ամենայաւ հիմնարկութիւնը իր ամենա-
ազնիւ ու բարի նպատակներով, եթէ նրա միջի
պաշտօնեաները ամենատարբարական հասակա-
ղութիւն անգամ չունեն ազնուութեան ու բա-
րութեան մասին:

Օրինակ, որքան գեղեցիկ հիմնարկութիւն է

գիւղական դատարանը: Որքան բարի
զգացումներով է ստորգրված եղել այս հիմ-
նարկութիւն մտցնող օրէնսդիրը, որ գիւղա-
կան ինքն ժողովրդին իրաւունք է տուել իր
համար դատաւորներ ընտրելու և այդ ընտրու-
վի դատաւորներին, որպէս գիւղական կեանքին
լաւ ծանօթ մարդկանց, շատ ընդարձակ իրա-
ւունքներ է յատկացրել նրանց իրաւասութեան
ենթարկելով գիւղացիների մէջ առաջացող բո-
լոր առօրեայ վէճերն ու տարաձայնութիւն-
ները: Անկասկած, գիւղական դատարանի նպա-
տակը կատարելապէս պիտի է ու համակրելի:
Բայց տեսնենք, արեօք դատարանը հասնում
է իր գեղեցիկ նպատակին, կամ ժողովուրդը
կարողանում է օգտվել այս գեղեցիկ հիմնար-
կութիւնից:

Որպէս զի լաւ ըմբռնեք գիւղական դատա-
րանի կատարած գերը մեր ժողովրդի կեան-
քում, նախ պէտք է իմանանք, թէ ո՞վքեր են
մեր դատաւորները, Համարեա ամեն տեղ գիւ-
ղական դատաւորի լուրջ ու պատասխանատու
պաշտօնը վարում են «անուան տէր» հարուստ
մարդիկ, այսինքն գիւղական վաշխատուները,
կեղեքիչները, կամ նրանց արքանակները,
մարդիկ, որոնք բացի իրանց անձնական շա-
հերից ուրիշ ոչինչ չեն ճանաչում և արդա-

րութիւնը ու ուրիշ շահերը պաշտպանելու մեծ
յիմարութիւն են համարում: Այս մարդիկ մաս-
նաւոր կենսաբուս սովորած լինելով կեղեքել
և հարստահարել, չեն դաբաւում կեղեքել
անպաշտպան ժողովրդին և պաշտօնավարու-
թեան ընթացքում Աւելի լաւ է ասել, որ նը-
րանք բոլորը (մենք բացառութիւններ չենք
ճանաչում) աշխատում են դատաւորի պաշտօ-
նը ձեռք բերել միայն այն նպատակով, որ ա-
ւելի կարգին ու գիւրութեամբ կարողանան
կեկեքել: Մարդ չէ կարողանում առանց սրտի
դարադատութեան ներկայացուցչի դերում, մարդ
քիչ է մնում զարյոթից պատուի, երբ տես-
նում է թէ ինչպէս նրանք ամենայնպէս ա-
նաձօնութեամբ տեղի անտեղի պոկում են
թշուառ գիւղացուն, շատ անգամ խլելով նրա
վերջին կտոր հացի գինը:

Կաշտակերութիւնը, որ սաստիկ տարածված
է գիւղական պաշտօնեաների մէջ ընդհանրա-
բեր բան է համարվում: Երբեմն դատաւորը
համարձակվում է հրապարակում ահագին գո-
ռում գոչիւնով պահանջել իրան հասանելի
կաշառքը, ինչպէս մարդ կը պահանջէ իր ճա-

կատի քրտինքի, իր հալալ աշխատանքի վարձը:
Փորձեցէք յանդիմանել նրան, փորձեցէք համո-
զել, որ կաշտակերութիւնը անբարոյականու-
թիւն է, մեղք է. և նա ձեզ կը պատասխանէ.
«Եթէ մեղք լինէր, սասը պատուիրանների մէջ
«Որ կաշտակիր» էլ գրված կը լինէր» և կա-
ւելացնի «սուբբը իր սուբբ տեղով իսկի ա-
ռանց խուսի ու մտի մուրազ չի տալիս»:
Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ
մեր գիւղական դատարաններում ոչ մի գործ
առանց կաշառքի չէ սկսվում ու չէ վերջա-
նում: Իսկ որովհետեւ դատաստանական գոր-
ծերի շատութիւնից կախված է կաշառքի ա-
ռատութիւնը, այդ պատճառով դատաւորները
բնականաբար աշխատում են, որ դատարանը
միշտ լիքը լինի գանգատաւորներով, նրանք
չառ անգամ իրանց ձեռքով գիւղում երկպա-
ռակութիւններ են սերմանում ու զրգում գիւ-
ղայիններին դատարան դիմել, արպէս զի կա-
րողանան մէջտեղից օգուտ քաղել, խեղճ գիւ-
ղացիներին կեղեքել:

Ահա, օրինակի համար, թէ ինչպէս են ըն-
թանում մեր գիւղական դատարանի գործերը,
ընդհանրապէս Դիցուք Թորոսը ուղում է
գանգատվել Պողոսից, որ վերջինը վարել ու
ցանկ է Թորոսի պատկանող մի օրավար հո-

րինքը գործիքն,— եւ նա ու նրա գործը կը մոռացնին, անհետ կը կորչեն: Մենք ունեցել ենք շորհարչի, տաղանդաւոր գործներ, բայց նրանց գործածքները գտնելու, նրանց հետ ծանօթանալու համար պէտք է անագին տանջանքներ յանձն առնել, որոնք, խնդրել հարկեր ու մի մարդկանց: Մենք անցեալ տարի էլ մատնացոյց ենք արել մեր այս անբարեխղճութիւնը, յանցաւոր անտարբերութիւնը, բայց կրկնելով այսպիսի յարմար առիթներու բոլորովին անկողնու լինելու, որովհետեւ ոչ ոք էլ կարող ասել թէ մի անգամ ասածը մեր մէջ կարող է իսկոյն ազդեցութիւն անել եւ գործնական հետեւանք ունենալ: Մեր անկողնութեանը անկողնու լինելու եւս թանձր է, անկողնու անկողնութեանը...

ՆԱՄԱԿ ԱՆԱԿԱԿԱՒՅՑ

Ապրիլի 27-ին
 Ապրիլի 28-ին քաղաքային վարչութեան զանգուրդ կայացաւ քաղաքիս ս. ինչ եկեղեցու երէցփոխի ընտրութիւնը:
 Հնարդական սկզբունքը որքան էլ հին է հայերես մէջ, որքան էլ ընդհանրացած ու ժողովրդականացած, այնու ամենայնիւ նա դեռ չէ ծառայում իր բարձր կոչմանը: Մեզանում ընտրում են, որովհետեւ առաջարկում է ընտրել եւ ընտրվում է նա, ով շատ «հետամիտներ» ու բարեխղճներ ունի: Իսկ եթէ չի վերուստ չը կարգադրվի ընտրել որ եւ է հասարակական պայտօնայ, դուք է մէկը ցտան վարէր անասնաման իրաւունքներով նոյն պայտօնայ: Եւ անա ընտրվեց եկեղեցու երէցփոխ, որովհետեւ առաջարկված էր ընտրել: Երբորը չարքան էր, որ հասարակութիւնը զբաղված էր այդ ընտրութիւններով, մանաւանդ որոշ կերպարանքի տէր անասններ, որոնք մի կողմը դրած ամօթ ու պատկառանք, ոչ մի միջոց չէին ինչպէս իրանց թեկնածուն անցկացնելու: Հնարութիւնները վերջացան երկու ժողովում, որոնցից առաջինում պ. Կարապետ Մազաբեկյանը համաձայն կերպով նկարագրելով երէցփոխի հասարակական կոչումը, թեւ չհոգովեան մասնավոր այն բազմաթիւ անհրաժեշտ պահանջները, որոնց իրագործումը պիտի լինի նոր երէցփոխի միակ ջանքը: Նա յիշելի, որ եկեղեցու յարգը թէ ներքին եւ թէ արտաքին անջնջութեան պատճառով ընկած է ժողովրդի աչքում: Մեր եկեղեցուն հարկաւոր է կանոնաւոր երգեցիկ խումբ ունենալ, Ախարքաբի պէս հայաշատ գաւառի համար անհրաժեշտ է ունենալ մի շորհարչի վարդապետ-դորձակալ, վերջապէս եկեղեցու կիսատ վերանորոգումը եւ այլն, եւ այլն: Երէցփոխ ընտրվող պ. Սեդրակ Մանուկեանը, որը գնելով իր տուփը, ընտրվեց 13 ձայնով ընդդէմ 5-ի: Նա 25—30 թեկնածուներից միակն էր, որ յանկարգաւ քուէարկվի:

Ամսիս 26-ին, տեղիս հաշտարար դատարանում քննվում էին վախճանութեան երկու հետաքրքրական գործեր: Մինչեւ այժմ դիւզացուն անխղճօրէն կեղեքման գործի մէջ դատի էին ենթարկվել դիւզական երկու յայտնի տուղեր—չամուրացի Թալուր Թաղաձորեանց եւ գեծնորացի Թարսթիւն Կարօյեանց: Բայց այդ օրը, առաւօտեան ժամի 9-ին, մեղադարտի ամօտի վրա բաղմել էր Ախարքաբի պատուաւոր քաղաքացի Թալուր Մարգարէ:

րով, որի դէմ դատ է սկսել Ադամ Շահնազարեան անունով մի խեղճ ջլգրաչէնցի:
 1882 թ-ին յիշեալ Ադամ Շահնազարեանց, անտեսական ամենաթշուառ գրութեան մէջ լինելով, դիմում է պ. Մարգարովին եւ 8 կօտ (8 պուլ) ցորեն խնդրում «չարեմով», այսինքն վեց ամսվայ դրամագլխի քառորդը վճարելու պարտաւորութեամբ, որ անում է 50 /: Բայց վերջինս, բաւական չը համարելով առաջարկած պայմանը, կրաշաւար էլ է պահանջում, ուստի եւ գանդատաւորը ստիպված է լինում իր երաշխաւորի հետ միասին ապ 8 կօտի մուրհակ: 1887 թ-ին պարտքը քառապատկովում—բաճում է 32 կօտ, որից պարտապան Շահնազարեանցի երաշխաւորը 27 կօտ ցորեն տալով իրը ազատվում է երաշխաւորութիւնից: Բայց պ. Մարգարովի, առանց ոչնչացնելու 32 կօտ ցորենի մուրհակը, 5 կօտի մուրհակ էլ վերցնում է առանձնապէս Շահնազարեանցից, որը 1887 թ-ից մինչեւ այսօր 114 րուբլի փողով ու անասուններով պ. Մարգարովին վճարելուց յետոյ, այժմ դարձեալ պարտ է մնում 24 կօտ ցորեն եւ 24 կօտ գարի: Բայց պատուաւոր քաղաքացի» պ. Մարգարովի, երկիւղ կրելով, որ հաշտարար դատարանում կարող են վախճանութեան կատակներ ծագել, մուրհակը յանձնում է ջլգրաչէնցի Կօպէլեանցին շինական դատարանում գանդատվելու, ուր, ի հարկէ, վախճանութեան մասին հարց անցում է կարող լինել: Մեղադրվողին պայտօնայում էր երդուաւոր հաւատարմատարի օգնական պ. Նիկոլայեւ: Իսկ գանդատաւոր Շահնազարեանցին պայտօնայում էր առանց վարձատրութեան մի յարգելի երկուստար, պ. Թովմանէս Գարբինեանց, որի վրա եւ բարդեց իր վախճանութեան մեղքը պ. Մարգարովի յիշեալ գանդատը համարելով նրա ներքնում, որի մասին կազմվեց արձանագրութիւն: Գանդատաւոր Շահնազարեանցի խնդրանքը գործի քննութիւնը յետաձգվեց, որպէս զի միջոց ունենալ ներկայացնել գրաւոր դիմումներ եւ վկաններին, իսկ մեղադրվող պատուաւոր քաղաքացի Մարգարովի ազատվեց երաշխաւորութեամբ:

Երկրորդ գործը գեծատուրեցի Գրիգոր Գօնէրեանցի գործն էր. սա 1895 թ-ին իր համագիւղացի Գարութիւն Կարօյեանցի 86 րուբլի պարտք վերցնելու մինչեւ այժմ 40 րուբլի տոկոս վճարելուց յետոյ, 210 րուբլի էլ պարտ է մնում: Այս գործի քննութիւնը նոյնպէս յետաձգվեց, բայց մեղադրվող Կարօյեանցն ուղարկվեց բանտ մինչեւ գործի քննութիւնը: Սա վախճանութեան երրորդ գործն է, որ վերաբերում է յիշեալ «Արութիկ ազա» Կարօյեանցին:
 Ուրախալ է, որ վերջապէս գիւղացիներից ոմանք, ճանաչելով իրանց սոսնակով արած պատիւն ու մարդկային իրաւունքները, գլուխ են բարձրացնում իրանց անխիղճ հարստահարչերի դէմ: Ջավախցի

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԿԻ ԳԱՒԱՒՅՑ

Բարանա գիւղ, ապրիլի 28-ին
 Ղազախի գաւառը, իր աշխարհագրական դիրքով աւազակութեան համար որպէս յարմար վայրեր ներկայացնող լուսնոտ երկիր, միշտ յայտնի է եղել իր աւազակային խմբերով: Ղազախի չարքաչ մշալը, ամառվայ տապ օրերը,

որի մի տարվայ արդիւնքը, 50 րուբլին, նա մտադիր է պահանջել Պողոսից: Գանդատաւորը դիմում է դատարան եւ խնդրում է արձանագրել իր գանդատը, բայց նրան պատասխանում են, թէ դեռ եւս ժամանակ չը կայ եւ թէ թող սպասի մինչեւ հետեւեալ նիստը: Թորոսի երկրորդ դիմումին նոյն պատասխանն են տալին, իսկ երրորդ անգամ արդէն աւագ դատաւորը յօնքերը կիտում է ու թթված դէմքով Թորոսին ասում է՝ Այ տղայ, չը գիտեմ ասածդ ինչ է, որ հոգեւորի նման մարդի բզի չըքում ես. զեզ ասում եմ, որ դեռ ժամանակ չը կայ, ինչու չես հասկանում: Թորոսը զլխի է ընկնում, թէ ինչն է ժամանակ չունենալու պատճառը եւ ճարանասեալ հետեւեալ օրը ճանաչում է՝ ազա սո՛ւղ ի ին, այսինքն նրա բռնն է գնում մի կողորած թղթագրամ եւ մի բաժակ արագի է հրաւիրում: Այդ դէպքից յետոյ ժամանակը, ի հարկէ, գտնվում է եւ Թորոսի բողբջը անմիջապէս արձանագրվում է: Բայց գործի քննութիւնը չուտով չէ կատարվում: Անցնում են շաբաթներ ու ամիսներ: Թորոսի տուած թղթագրամը վաղուց ծախսվել է, նրա խմացած արագը մարմել է, իսկ գործը բոլորովին մոռացութեան է արք-

րին աշխատելուց յետոյ էլ գիշերը հանդիստքուն չէ ունեցել, նա միշտ երկիւղի ու սարսափի մէջ է անցկացրել իր բաճն օրերը: Միայն վերջին երկու տարին, շնորհիւ գաւառապետ պ. Կանչկիի ընդունած եռամսհոտ եւ խիստ միջոցների, աւազակութիւնը մի փոքր մեղմացել է:

Հէնց որ սկսվում է դարունը, անտարբ ծածկվում է տերեւներով, աւազակութեան համար բացվում է նոր «սեղան», եւ իսկոյն կազմվում է մի աւազակային խումբ: Ներկայ սեղանի համար յայտնվել է Մրիբրից փախած մի ինչ որ Գառ-Մամազ աւազակապետ, որն իր մօտ հաւաքելով մի քանի իր նմանների, կազմել է աւազակային խումբ: Սա տարրերվում է իր նախորդներից նրանով, որ կողոպտելու նպատակով սրա նրա վրա յարձակվելուց չը բաւականանալով, շատ անգամ ուրիշների միջոցով բռնում, իր մօտ է տանում հարուստների գաւակներին եւ իր մօտ պահում է այնքան ժամանակ, որ այդ կենդանի աւարի ծնողից ստանայ մի յայտնի դուստր, հակառակ դէպքում ապառնում է իր մօտ պահած անսեղ պատանդի գլուխը կտրել:

Աւազակութիւնից ոչ պակաս տեղ է բռնում եւ գողութիւնը: Գիշեր չէ անցնում, որ գողութեան դէպք չը պատահի: Գողութիւնն այն աստիճան յանդիստքեան է հասել, որ շատ անգամ գողացած կենդանին կէս գնով վաճառում են իր տիրոջը:

Շատ դէպքերից միայն մէկը յիշենք:—Անցեալ օրը գողացան Պ. ի երկու ձին, երկու եզր եւ մի գոմէշ: Երկու երեք օրից յետոյ յայտնվեց, որ գողերը «Այրում» կոչված թուրքերն են: Պ. ին իսկոյն շտապեց նրանց մօտ եւ 5 կենդանիների համար 90 րուբլի վճարելուց յետոյ միայն կարողացաւ յետ գնել:

Ա. Տ. -ի.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԱՆՑԻՑ

Ապրիլի 29-ին
 Վարդապետը դեռ չարունակվում է. հողագործը դառն մասածմունքների մէջ խորատուգված, խոփն ու ձեւիչը չարակած, գլխակոր շտապում է դէպք դաշտ: Դառն է նրա գրութիւնը, որովհետեւ մի օրվայ համար ցանկուտ սերմ ունի, իսկ միւս օրվան՝ ոչ: Նոյն վիճակի մէջ են նաեւ չըջակաց գիւղերի աշակարները: Շատերը նոյն իսկ ւնի ճանկ հացահատիկ չունեն սերմելու համար եւ այդպիսիների արտերը եւ վարեկանողերը կամ ծառայում են ուրիշին ճաշին տարեվարձով (չուանը 40—50 կօպէկ, դեռեալներին հաշուով՝ 2 ր. 40 կ.—3 ր.) կամ ծախվում են նրանց պարտքի տարեկան տոկոսները հանգցնելու համար եւ կամ թէ մի-նում են անյան, արեւի առաջ չորանալով... Իսկ շատերն էլ լծկաններ չունեն, որոնցով կարողանային կամ օրավարձով տալ կամ թէ ուրիշի հետ «խիսար» լծել-վարելու:

Այդ իրողութեան պարզ ազդրոյց է այն հանգամանքը, որ առաջ երբ դեռ հողը բերրի էր, պարտաւոր էր, տեղական հողագործները ցանում էին խալվարներով, իսկ այժմ, ընդհակառակն, ցանքը կատարվում է պուղերով եւ նոյն իսկ ֆունտներով... Սակայն երկրագործ դասը այդքանով կարող է վարձատրվել իր դժոխային աշխատանքի փոխարէն.—սա ընդհանուր կարծիք է բոլորի համար, որովհետեւ նախկին հո-

ւանի առատածեւն է գտնվել Թաճախ պատահում է, որ հնարագէտ սուղիաները աղողեցնում են մի ձեռով երկու ձեռով բռնել, այսինքն նոյն գործի համար միամտամանակ երկու կողմից էլ կառուվում են. իսկ գործը, ի հարկէ, վճարվում է մէկի օգտին ի վնաս միւսի, որից նոյնպէս կաշտք են վերցրել: Այդ դէպքում վերաւորված գիւղացին, զիջուք Պողոսը, չը կարողանալով գուպ իր արդար զարոյթը, հէնց դատարանում կամ գիւղի հրապարակում այն պիտի հայտնաբերել թափում է թափում հրատարակելի գլխին, որ ամօթի ու պատուի զգացմունքը ունեցող մարդը լաւ կը համարէ գետիցը մտնել, քան թէ հայտնաբերելի այդ կարկուտին եւս թարկվել: Բայց անա դատաւորներից մէկը, չուրի փեշով սրբելով երես թուրք, մօտենում է գալրագրով Պողոսին ու նրան մի կողմ քաշելով, ակնաջին մի բան է փափսում: Պողոսը փոքր առ փոքր հանդարտվում է եւ քիչ յետոյ սկսում է արդէն մտերմաբար զրուցել դատաւորի բնու ձեւեւեալ օրը Պողոսը գանգատվում է Թորոսից, իբր թէ նա այս ինչ թեւեղ իրան պարտք է 80 րուբլի խաղողի փող: Ի՞նչ ասել կուզէ, որ գործը բոլորովին հնարված է օրէնսպէտ սուղիայի խորհրդով, որպէս զի համ

ղագործական կանոնաւոր կազմակերպութիւնը անգամ հազիւ էր կարողանում վարձատրել աշակարների աշխատութիւնը... Բայց եւ այնպէս էլ ասումք առ Աստուած», ասում է ցանք բարը եւ ճանկով հացահատիկը սփռում սեւ հողի մէջ...
 Ինչպէս յայտնի է, Նոր-Բայազետի գաւառի աղքատ գիւղերի ազգաբնակիցների նպատաստանտոյց լինելու համար, կառավարութեան կողմից օգնութիւն ստացվեց: Կարեք շատ զգալի էր մանաւանդ այս ցանքերի միջոցով, երբ չըջակաց գիւղերից շատերը բաւական չը պատ ստացան եւ իրանց ցանքերը կատարեցին: Նոր-Բայազետի տեղական չքաւորներին նոյնպէս սերմացու մատակարարելու համար հասարակութեան մի մասը խնդրամատոյց եղաւ կառավարութեան: Սակայն այդ խնդրը անհետեւանք մնաց, որովհետեւ հասարակութեան միւս մասը, որ կարեք չունէր նպատաստանալու չերաշխաւորեց չքաւոր դասին: Բնառութեան համար Մինչեւ նպատակները բաժանվում են հասարակութիւնների փոխադարձ երաշխաւորութեամբ: Այդ դէպքից յետոյ, տեղական հասարակութեան 2/3 մասը նորից ծուղով կայացնելով կրկին վճիռ կայացրեց եւ խնդրամատոյց եղաւ կառավարութեան՝ նպատաստանալու յուսով, չը նայած որ այդ նպատակ էր ցանքերին չի հասնի օգնութեան, քանի որ ժամանակը արդէն անցնում է, բայց կարող է մեղմացնել ընդհանուր կարիքը:

Տեղական բերքերը այնքան նուրբ էին անցեալ տարի, որ վեց ամիս չանցած շատերը սպաւեցին իրանց պաշարը: Նոյն իսկ աշանը, բերքերի հաւաքման եւ վաճառահանման ժամանակ, քաղաքային կլեռքի տակ, բայց մի քանի անդամները բերքերից, այն է կաղամբից, կարսօֆիլից, բոլկ ու գազարից, ոչինչ չէր կարելի գտնել: Թորոն ու գարին, որ կազմում են տեղական արդիւնաբերութեան զլխաւոր մասը, աչքով չենք տեսել բազարում ծախելիս: Այժմ չուկալում կը գտնէք միայն մի քանի սոսորակ ախլուր՝ ուրիշ տեղից բերված եւ մի այդքան էլ գարման, որ ծախվում է ճշգրտով ու կշեռով: Հացարոյը այն աստիճան կարծ հասակ ունէր, որ շատ արտեր Նոր-Բայազետի չըջակացում ձեռքով փետել անգամ անկարելի եղաւ եւ այդ պատճառով այս ձմեռը զգալի եղաւ անասունների կերի մեծ պակասութիւն... Մի խօսքով՝ անցեալ տարի մի շարքաւորակ տարի էր մեզ համար, երբ աւազակ ժամանակաւոր կողոպտիչ անասուններին, անբերրիութիւնը գրկեց բոլորին հայի արդիւնքից, երաշտը չորացրեց բուսականութիւնը, փչացրեց խոտը, այրեց կանաչի արմատը եւ այլն: Եւ անա այդ պատճառներով հողագործութիւնը ոչ մի կառուսաւոր հետեւանք չէ ներկայացնում: Կենսական մթերքները անկողն թանկացան քան անցեալ տարի, անասունների կերը մէկին երեք բարձրացաւ զին կողմից, հացը քառապատիկ գին գտաւ, լծկանները անատելի դարձան գնեքի կողմից եւ այլ այսպիսի աննպաստ հանգամանքներ:

Գ. Սինանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ՝

Այսօր, մայիսի 6-ին, լրանում է ուռաց հռչակաւոր զօրավար Սուլթոյի մահվան հարիւրամեակը: Թուսաստանը այդ տարեդարձը

Պողոսի սիրտը չանկի, համ էլ պղծկելու. նոր դուռը բացվի:

Այսպէս մեր դատաւորները, որոնց պարտականութիւնն է կուռններին ու վիճողներին հաշտեցնել, երկպառակութիւններն ու տարաձայնութիւնները վերացնել եւ ամեն կերպ նըպատակ գիւղացիների փոխադարձ համբարչխութեան ու խաղաղութեանը, ընդհակառակը գիւղացիներին միմեանց հետ թշնամացնում են սերմանում, որպէս զի կարողանան պղտոր ջրում ձուկ որսալ... Այն, սա փաստ է:

Բայց որքան լաւ բան կը լինէր, եթէ դիւղական դատաւորի համեստ պայտօնը յանձն առնէին մեր գիւղերում գտնվող օրինաւոր փոքր ի շատէ կրթված երեսփոխարէները: Որքան կարող էին նրանք բարձրացնել ընկալելիութեան արդարութիւնը եւ որքան մոխթաբարութիւն կը պատճառէին թշուառ գիւղացուն: Որը արդէն վերջնականապէս յուսահատվել է չարչի սուղիաների անխիղճ հարստահարութիւններից:

Ա. Շահնազարեանց

այսօր անհետ է հանդիսացր կերպով Երէկ, կովկասեան զօրքերի հրամանատարի կարգադրութեամբ, թիֆլիսի Ալեքսանդր-Նեվսկիի զինուորական մար կեղեցուք, ինչպէս նաև ուրիշ բոլոր զինուորական կեղեցիներու հոգեհանգիստներ կատարվեցան:

Թիֆլիսում մի խումբ անձինք մտադիր են հիմնել կուր անխոր ժողովրդի բոլոր դասակարգերի համար, որտեղ «կարելի լինէր օրվայ յօդուցութիւն աշխատանքից յետոյ, որպէս ասված է քաղաքում տարածած հրահրակցութիւնը մէջ, պարագլի որ եւ է ուսանելի գործով, որ թէ ֆիզիքական եւ թէ մտաւոր դուարանութիւն պատճառէր»: Այսպէս, օրինակ, բացի ընթերցանութիւնից եւ հրապարակական դասախօսութիւններէ, մտադրութիւն կայ կուրում զբաղվել եղբարականութեան, շողի եւ օրպիսի օյժերի, նոյնպէս եւ չ ճառագայթներով ստեղծեան եւ գործադրութեան վերաբերեալ փորձերով, նկարչութեամբ, արհեստներով, լուսանկարչութեամբ, երաժշտութեամբ եւ երգչոցութեամբ: Կուրի կազմակերպութեան համար նշանակված ժողովը կայանալու է առաջիկայ կիրակի, ամիս 7-ին, ժամը 4-ին կէսօրից յետոյ, քաղաքային խորհրդի գահլիճում:

Ապրիլի 27-ին, Պետերբուրգում, ուսաց կայտերական հնարողական ընկերութեան արևելեան բաժնի նիստում պրոֆէսոր Ն. Մարր կարգաց մի զեկուցում—«Հեթանոս վարստանի աստուածները, ըստ ս. Նունէի վարձագրութեան»: Պրոֆէսորը, հիմնովում վրայ պատմագիրներն եւ ս. Նունէի վարձագրութեան վրայ, ընտրուց այն աստուածներին, որոնց երկրպագում էին վրացիները մինչև քրիստոնէութեան ընդունելը: Բոլոր աստուածները թուով 7 էին, որոնց մէջ էին նաև Աֆրոդիտէ եւ Արմազ: Կոսպալուութեան, պրոֆէսոր Մարրի կարծիքով, վրայ մէջ սկսվել է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ, որ արեղել է մինչև այդ ժամանակ վրայ մէջ ընդունված երկնային մարմինների պաշտամունքը:

Այսօրվանց սկսած անդրկովկասեան երկաթուղու գնացքները պէտք է երթեանկէն նոր ցուցակով: Այսուհետև ժամերը պէտք է նշանակվեն Պետերբուրգի ժամանակի հաշուով: Պետերբուրգի եւ թիֆլիսի ժամացոյցների մէջ զանազանութիւնը 58 րոպէ է կամ մտաւորապէս մի ժամ:

Պարիզի համալսարանային ցուցահանդէսի միջազգային փերիի անդամներ ուսաց երկրագործութեան միջնորդութեան կողմից նշանակվում են անտառային ինստիտուտի զիրկետօր Կէր, առանձին յանձնարարութիւնների աստիճանաւոր Կոպուօլ, գիտական յանձնաժողովի անդամ Բազարով, Մոսկովայի գիւղատնտեսական ինստիտուտի պրոֆէսորներ Վիլիամ եւ Կուլեշօվ ու ինձային ինստիտուտի պրոֆէսոր Կոցովսկի:

Ստացանք իշխան Ի. Անդրոնիկովի «Кубы-турпа руда на Кавказе», որ պարունակում է իր մէջ կովկասեան բնիքի մասին մանրամասն տեղեկութիւններ: Գրքի մէջ գեանկված են բազմաթիւ արեւաակներ: Գրքը, որ բազկատան է 300 կրեպից, հրատարակված է երկրագործութեան միջնորդի կովկասեան լիազօրի զիւանառան ծախքով:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի հայոց Հըրատարակչական ընկերութեան տարկան ընդհանուր ժողովը պէտք է կայանայ հետեւեալ շաբաթ օրը, մայիսի 13-ին: Այդ ժողովում կը կարգայի 1899 թուի գործունէութեան տեղեկագիրը եւ տեղի կունենան պաշտօնատար անձերի ընտրութիւնները:

ՂԱՄԱՂՈՒԻ գիւղից մեզ գրում են. «Մեր շրջակայ գիւղերում այս մի քանի օրվայ ընթացքում անյայտ շարագործներ վեց ջրաղաց պարեցին: Ժողովուրդը դրան «Շրագացիների խօսքեր» անունը տուեց: Բացի ջրաղացի սյուղի, միջի եղած քարերն էլ ջրաղաց են: Առ այժմ «Շրագացիների խօսքեր» վերջացած է. դրան յաջորդում են մի շարք գիշերային զողութիւններ անհրոճ եւ խանութներում: Այս շարագործներն էլ գտնել չէ լինում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ղարիզ, ապրիլի 26-ին
Պարիզում այս օրերս լույս տեսաւ երաժիշտ պ. Լ. Եղիազարեանցի խորհրդութեամբ հայ

ժողովրդական երգերի մի ձայնագրած ժողովածու հայերէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով—«Հաւաքածոյ հայոց ժողովրդական երգեր»—(Recueil de chant populaires armeniens):
Այս գործի աշոգութեանը մեծապէս նպաստել են ֆրանսիացի արհեստաւոր երաժշտագէտներ, ինչպէս Ռէյեր, Բալլու-Դիկապորէ, Ժ. Մարրի, Վեստան Դէնդի, Շարլ Բօրդ, Վեկերլէն, Ժիւլ Շանսել, ինչպէս եւ ուսու երաժիշտ Կոզաչնիկօ:

Նախաբանը գրել է ֆրանսիացի հնագէտ եւ արհեստագէտ Պիեր Օրբի: Ուշադրութեան արժանի է ի միջի այլոց արեւելագէտ ֆրանսիացու այն միտքը՝ թէ հայկական մեղեդին, հայ եղանակներն առհասարակ չեն կարող եւրօպայու երաժիշտական ճաշակին հակառակ երևալ, «որովհետև հայկական հանձարը—ասում է անուանի հեղինակն այդ նախաբանում—բնուօտապէս մեղ եւրօպայիներին, որ այն մեղեդիները, որոնք այս հեռուօր ցեղին այնքան հմայում են, երբեք մեզ օտարտուր չեն կարող թուլ եւ ինչ որ գեղեցիկ է նրանց համար՝ հաւատարմապէս կարող է նոյնը լինել եւ մեզ համար: Որովհետև դուրս եկած հեռուօր ժամանակի սահմաններից, որ պատմութիւնը դժուարութեամբ միայն կարող է ճշդել հայ ժողովուրդը իր ծաղումով մի եւ նոյն ցեղին է պատկանում, ինչ եւ մենք—հնդկա-եւրօպական ցեղերի ազգակցութեան լայն սահմանների մէջ: Եւ ուրեմն նա արժանի է մեր ուշադրութեան եւ հետաքրքրութեան, նա ունի մեզ հետ իր պատմական եղբայրակցութիւնը, հանձարը որոշ չափի նոյնութիւնը նրա լեզուի ու գեղարուեստի մէջ կան մի շարք մասնաբաժանութիւններ, որոնք զարմացում են իրրեւ ինչ որ անորոշ եւ հեռուօր յիշատակներ եւ մեզ սակ են տալիս՝ «բայց դրանք մեզ համար անանօթիներ չեն»:

Պ. Եղիազարեանը, նախ քան հայկական մտօրինների հրատարակութիւնը, երգել է Ֆրանսիայում ու Անգլիայում եւ համարեա ամեն տեղ, ինչպէս ինքն ասում է իր «առաջարկում», առանձին ընդունելութիւն են գտել մեր ժողովրդական եղանակները: Ահա այն հանդիմանքը, որ ի միջի այլոց քաջակերել է պարոնին ձեռնարկել իր այս գեղեցիկ գործին—«Ճանաչելիցնեմ տալու ամբողջ Հայաստանի ժողովրդական երգերը նոյն այն մեղեդիով, որ երգում են մեր հայրենակիցներն իրանց մայրենի հողի վրայ, ահա այն նպատակը, որին մենք նուիրել ենք այս վերջին տարիների ամենազարգր ժամերը», ասում է նա իր առաջարկումում:

Նա յայտնում է նոյնպէս, որ երկու ամիսը մի անգամ պարբերաբար հրատարակվում է մի տեսարակ: Այս առաջին տեսարակը բաւական չեղջ հրատարակութիւն է՝ մաքուր, հաստ թղթի վրայ եւ երեք զարգարված է Անիի ս. Լուսաւորչի կեղեցու նկարով: Երեք լեզուով եւ եւրօպական նոտերով ձայնագրված են առ այժմ հետեւեալ եօթ երգերը. 1) «Արաքսի արտասուք», 2) «Հերիք որդեակք», 3) «Կլիկիկա» (Երբ որ բացվին), 4) «Հայրիկ», 5) «Զիմ գլինին», 6) «Քոյիւք բարձր», 7) «Օրօրօցի երգ», 8) «Արի իմ ստրակ»:

Այս երգերից մի քանիսը ինքը պ. Եղիազարեանն է ձայնագրել, որ յետոյ ներդաշնակել են ֆրանսիացի երաժիշտները, որոնց անունները յիշատակելու առիթ ունեցանք, միւսները ձայնագրել ու ներդաշնակել են նոյն ֆրանսիացիների եւ օրօրից երգ միայն 40-զանկնով: Երկերի ֆրանսերէն թարգմանութիւնը կատարել է մեծու մասամբ Պիեր Օրբի եւ իտալերէնը Ծ. Բօնալլոտա:
«Մենք հաւատարիմ ու բարեխիղճ թարգման եղանք մեր ժողովրդական գեղարուեստի, ասում է պ. Եղիազարեան, ներկայացնելով մեր մեթօդները նոյնպէս, ինչպէս երգում է նրանց հենց մեր ժողովուրդը»: Եթէ եւրօպական նօտաների տակ պահպանված է հայկական եղանակների ոգին, բնատրութիւնը, նրբութիւնները, ինչպէս հաւատարմապէս է պ. Եղիազարեան, նոյնը չէ կարելի սակ սակախ երգել թարգմանութեան մասին. այստեղ մի բարեձեանական խառնակութիւն է տիրում: Մենք զարմանքով նկատեցինք, որ բացի «Մար Արաքսին», որի թարգմանութիւնը նախ-Բէյլինն է, մնացած երգերի թարգմանութիւնները շատ եւ շատ հեռու են բնագրից, երբեմն նոյն իսկ բոլորովին տարբեր բովանդակութիւն ունեն: Չենք կարծում, որ այսպիսի թերութիւնը անհրաժեշտ, անխուսափելի լինէր երգերի երաժշտական չափերին յարմարեցնելու, ներդաշնակութեան տեսակետից: Մի քանի օրինակներ

գտնել աւելորդ չը նկատվի մեր նկատողութիւնն ապացուցանելու համար.
«Մենք երբայրեր ունինք հեռու տեղերում, «Նոքա մեր վրայ լուկ արցունք են թափում. Ֆրանսերէն թարգմանված է՝
O, freres, qui vivez sous des cieus elements
Venez nous aider a sortir des tourments!
Եթէ այս ֆրանսերէնը կրկին հայերէնի վերածվի, կը ստացվի մի նոր երգ:
Ահա մի այլ օրինակ՝
«Չիմ խաքի կապէն կիտամ
Դէչ խանա ծամ թիւն ի ծովէն»:
Je te donnerai, veux tu de mes cheveux,
Va chercher dans la mer l'anneau d'or.
Եւ այսպէս հայերէնում կապան է ստաշարկում, ֆրանսերէնում մաղբը, որպէս զի լողուրը հանի ծովից l'anneau d'or—ոսկէ օղակը, ինչ որ հայերէնում ասված է «ծամ թիւն» կամ այս.
«Չիմ որդին չուղէ ազաւոր դառնալ»:
Mon fils ne veut pas de charts amoureux.
«Չիմ որդին չուղէ սովորաբար դառնալ»:
Mon fils ne veut de tes monceaux d'or.
Կարծում ենք այսքանը բուական է ապացուցանելու, որ թարգմանութիւնները ֆրանսերէն (երեւի նաև իտալերէն) չափազանց թերեւ են: Յայս ունենք սակայն, որ իր սպազայ հրատարակութիւնների մէջ այս թերութիւնից կը խուսափի համարելի երաժշտագէտը, մասնաւոր՝ որ այդ անհարին չէ: Ծնարիտ է, սոյն հրատարակութեան նպատակը գրականաբանաստեղծական չէ, այլ երաժշտական, բայց միթէ մէկը կարող է խանգարել միւսին. եթէ օգտակար է, որ եւրօպային իմանայ, թէ մենք ինչպէս ենք երգում, կարծում ենք նոյնքան, եւ աւելի օգտակար է, եթէ նա իմանայ, թէ մենք ինչ ենք երգում, ինչով ուրախանում, ինչ ողբում, ինչ ուղում: Իսկ այսպիսի թարգմանութիւններով եւրօպացիին հաղել թէ կարողանայ ճանաչել մեր հոգու ցաւերը եւ ուրախութիւնները:

Այս բոլորով հանդերձ, ուրախ ենք ասելու, որ գեղեցիկ է գործը, գեղեցիկ է նպատակը: Եւ ի նկատի ունենալով այն բազմաթիւ դժուարութիւնները, որոնք կազմված են մի այսպիսի գործի հետ, պ. Եղիազարեան իր ներկայ հրատարակութեամբ ոչ միայն արժանի է իւրաքանչիւր հայի քաջակերութեան եւ համարակրթեան, այլ նոյն իսկ երախտագիտութեան, որ պէտք է արտայայտվի անհրաժեշտ օժանդակութեամբ նիւթական եւ բարոյական: Յանկարել է, որ ներկայ սիրուն հրատարակութիւնը հայ սպառնակի զարգը դառնայ, ինչպէս նա դարձել է օտարների մօտ:
Մեր հայրենակից բժիշկ Լօրիս-Մէլիքեան նշանակված է ցուցահանդէսում ուսական սեկցիայի ատղջապահական մասի վերահսկող եւ նոյն սեկցիայի կառավարող եւ կազմակերպող մասնաժողովի բժիշկ:

Ա. Ահարեան
ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
«Վերջին օրերի անցքերը աղանայ մարդու մտածել են տալիս, գրում է «С. Пер. Вѣд.» լրագրի թղթակիցը Կ. Պօսեթ, որ «խալիֆի օրենսդատները» առկ ամեն ինչ եւ ամեն ոք բարեբաղդ դրութեան մէջ չէ եւ որ հեռու չէ այն օրը, երբ Ստամբուլի երկնքի վրայ կը կուտակվին այնպիսի մաշկ անկեր, որոնք շատ անգամ զարհուրեցրել են Օսմանի որդիներին: Յուզմունքը երկաւորաբար թիւրքերի մէջ ահանքի չափեր է ընդունել եւ ամենաբար պետական գործիչները կամաւորապէս, առանց որ եւ է արքեպիսկոս, առանց կանչ անելու, հետեւում են թիւրքերի մարաքաղաքից, որպէս զի միանան սուլթանի փեսայ Մահմադ-փաշայի հետ, որ պաշտօնապէս հաղորդել է իր օգոստոսիստ անհրաժեշտ, թէ իր ամբողջ կանաքում անհաշտ թիւնամի կը լինի գերեզմանական կարգերի հետ, որ թիւրքերի ամենաժողովրդական գործիչներից մէկը Իքթայիլ-Քեամիլ-Բէյ, փախել է Եւրօպա, որպէս զի սոյն սոյն ամբողջ աշխարհին, որ ինքը համարաչխ չէ երկրի այժմեան դրութեան հետ թիւրքայում, ուր օրէնքը, արդարութիւնը եւ պատիւնը առ ոչինչ են համարվում եւ տոնակերպ են անվտու օսմանեան կայսրութեան ներկայացուցիչների կողմից: Իքթայիլ-Քեամիլ-Բէյից յետոյ փախել 18 սասանաւորներ, որոնք աչքի ընկնող պաշտօններ էին վարում գնապային միջնորդութիւնների մէջ: Նրանց ընկալարաններում կատարված խորհրդութիւնները երեւայ, որ թիւրքական օսմանող երկրաստարակը պարտաւորում էին խմբերով պրօպագանդա արտասանան: Մահմադ-փաշայի գրօշակի տակ ամենուրեւ համար: Մինչև այժմ Զենք կարծում, որ այսպիսի թերութիւնը անհրաժեշտ, անխուսափելի լինէր երգերի երաժշտական չափերին յարմարեցնելու, ներդաշնակութեան տեսակետից: Մի քանի օրինակներ

թեամբ, որի հետ ուսանող երիտասարդութիւնը գրադրութիւն ունէր: Այս բոլոր անցքերը, անչաւա, չէին կարող չազդել սուլթանի հոգեկան գրութեան վրայ եւ, ինչպէս ասում են, Իլդիզ-Քիօսիում մինչև անգամ չը տեսնված անհանգստութիւն է տիրում:

«Վերջին հրապարակային ժայթքումը, որ սեւեց մի քանի օր եւ որի մասին հաւորացի հեռագիրը, սարսափ տարածեց սեղանական ազգաբնակչութեան վրայ: Քարերի, սեղերի եւ լուսայի ժայթքումը սաստիկ զօրեղ էր. դրա հետ միասին հրարիս ընթանից դուրս էին թռչում բոցի ամբողջ սիւններ: Երկրից թեթեւ կերպով ցնցվում էր: Հրաբխային գլխաւոր բերանից 50 մետր հեռու լայնաց մի նոր բերան, որ գործում էր շատ ուժեղ կերպով՝ դուրս թափելով հրաշէկ լուսա քարերի եւ առաջի ամբողջ կոյտի հետ: Լուսան դուրս էր հոսում ինչպէս հեղուկ, հրաբխի բոլոր բացուածքներից, բայց Վեզուվի սահմաններից չէր անցնում: Չը նայելով դիտանցի յայտարարութեան, թէ անմիջական վտանգի երկիւղ չը կայ, Վեզուվը չըջապատող փորձի քաղաքների եւ գիւղերի ընկալիչները գիշերը փողոցներում եւ ճանապարհների վրայ էին անցկայանում: Չը հեռացնելով աչքերը բոցավառող լեռնազալաթից եւ ամեն մի ժայթքման ժամանակ սպասելով զըժարգութեան: Տեղական իշխանութիւնները ամեն միջոց ձեռք էին առել ժամանակին օգնութիւն հասցնելու բնակիչներին կարեւոր դէպքում: Դիտանցի հաղորդած տեղեկութիւններին հետեւում էին տեսչակներ հետաքրքրութեամբ: Տեղացիների սարսափը աղեղնութիւն չէր գործում միայն օտարերկրացի ստորիաների, մասնաւոր անգլիացիների վրայ, որոնք ժամերով վիճարանում էին ստախաների հետ, կամենալով թոյլտուութիւն ստանալ նրանցից եւ բարձրանալ Վեզուվի վրայ: Այսու ամենայնիւ, չը նայելով ստախաների ընդհատմանը, չըրս ստախաների անցողից բարձրանալ սարը եւ մօտենալ հրաբխի բերանին: Երկրորդ օրը նրանց զիակները գտնվել են կիսապրկած եւ պայտերակված դրութեան մէջ: Բայց եւ այնպէս անցկայաններ, մասնաւոր անգլիացիները չեն վհատվում այդ սարսափելի խրատից եւ աշխատում են մի կերպ անցնել ստախաների օղակի միջից դէպի հրաբխի գլուխ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՅՑ

4 մայիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այսօր զօրքի բոլոր մասերում կարգազրկված են տեղեկութիւններ Սուլթոբոյի կհանքի եւ քաջագործութիւնների մասին: Սեւեռնօսկի եւ Չանապօրիսկի յանտն Սուլթոբոյի գնդերի կողմից ուղարկված պատգամաւորութիւնները արձնելուց պակ դրին Սուլթոբոյի գերեզմանի վրայ: Գինեբայիսիւնուն իր ծառայութիւնը սկսել էր այդ գնդերում:
ԲԻՒՍՏՕԼ: Գիկա-Բիլ արտասանեց մի ճառ, որի մէջ ասաց, թէ կատարեալ հիւք կայ յուսու, թէ պատերազմի անգիրը կը ցրվեն Օրանսեան հանրապետութիւնը արդէն պակ դրին Սուլթոբոյի գերեզմանի վրայ: Թէ չուտով կազաւոյի եւ Մեֆիկիցը, որի պաշտպաններ անմահ փառք վաստակեցին: Նաւատօրմի ծախքերի աւելացումը հարաւոր է: Նա չէ կարծում, թէ հարկաւոր լինի զօրքի թիւը անբնդհատ եւ մեծ չափերով աւելացնել. պէտք է յոյս դնել անկանօն զօրքի եւ կամաւորների վրայ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Երեք սենատոր, կօնգրէսի երեք անդամ եւ շատ քաղաքացիներ ուղեւորվում են Նիւ-Իօրկ ուղեկցելու բօքս պատուիրակներին, որոնք Վաշինգտոն կը գնան ուրբաթ օրը: Բօքսերի կազմակերպելու Վաշինգթոնը, իսկ կիրակի նույնպէս կը լինեն ժողովրդական մեծ ժողովի, որտեղ ճաներ կարտասանեն անհատորներ եւ պատգամաւորների ժողովի անդամներ:

ԼՐԻՆՅՈՒՄԱՐԿԵՂԵԼ: Կուր պատանեց կրայպանի մօտ, որ 32 մրն հետո է Մեֆիկիցի: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական Դաշնակից հանրապետութիւնների զօրքերը յարձակմամբ առան Մեֆիկիցի մարտկոցները Հեռեւեալ գիւշեր նրանք չըջապատվեցին եւ այդ ժամանակ նրանցից սպանվեցին 7, վիրաւորվեցին 17 ուրգի եւ շատերը վերէր ընկան: Անգլիացիները սպանվեցին եւ վիրաւորվեցին 50 հոգի: Լուրինի նայելով բօքսերի առաջագահ զօրքը յետ է մղված անգլիական այն զօրաբանի կողմից, որ գնում էր Մեֆիկիցի արտակուր: ԿԵՊԼԻՆԳ. (Շիլլիկ): Երէկ երեկոտեան, կըր «Պրինց Կարլ» յոգենաւոր անցնում էր «Կեպլինգ» յոգենաւի մօտով, վերջինից նկատեցին, որ անողջին յոգենաւի վրայ յանկարծ երեւաց մի ինչ որ մարդ, որ աղաղակելով թէ «ով որ օտանեալ կը սպանեն», սակիկ հտակց եւ անմիջապէս դիւրաբանական զգոցում ձեռքակալված են 62 ուսանողներ եւ նրանցից մի քանիսի մօտ գտնված են նախակներ թիւրքերի եւրօպական գեապաններից մէկը ստորագրու-

վերաբերվածներ, որոնցից վեցը, զրանց թը-
 ռում նաև նաև ապագայ, արդեն մեռած: Մնա-
 ցած մարդիկ վարկված էին: Վերաբերվածներից
 մէկը այսօր մեռաւ: Ոստիկանութիւնը որո-
 նում է մարդասպանին:

Կեղևի Գ. Պրինց Կարլը չորսնասը դուրս ե-
 կաւ երէկ Արբորի գէպի Ստոկհոլմ եւ կէս գի-
 շերին անցաւ Կլիվլանդի ժողով: Այդ ժամանակ
 մարդասպանը սկսեց փակել նաւասենականե-
 րում ուժ որ կարողացաւ, մի եւ նոյն ժամանակ
 մի-մի ատրճանակ լսեցած իւրաքանչիւր ձեռ-
 ջում գնտակ էր արձակում ամեն մի պատա-
 հողի վրա, իսկ քիչ անցած՝ աջ ու ձախ հա-
 ռուածներ է նստցնում նաև սրով ու դանակով:
 Նաւագետը հարուած ստացաւ մէջքին, մի կին
 սրի հարուած կրեցին, մի երեխայ—դանակի
 հարուած, իսկ շոտլանդացի—ատրճանակի հա-
 րուած ուսին: Նաւասենական թուղթ խա-
 դացող չորս հողաց մէկը սպանվեց գնդակով,
 որ դիպաւ նրա ձախտին: Երբ «Կեղևի» չո-
 գենասը մտնեց Պրինց Կարլը-ին, մարդաս-
 պանը իրան գցեց ազատարար նաւակը եւ չոս-
 պով հեռացաւ: Պրինց Կարլը, շոտլանդացի ղե-
 կավարութեամբ նաւագետի փոխարէն, ու-
 ղեւորվեց Ստոկհոլմ, որ եւ հասաւ այսօր ա-
 ռուածներն: Բազմաթիւ խուզարկուներ մտան
 չորսնասը եւ տարան սպանվածներին եւ վի-
 րաւորներին: Մի զինագործի մօտ, որ կենում
 է Արբորի մօտ, երէկ եկաւ մի ինչ որ մարդ եւ
 անուանելով իրան Գրեկլիտ Ստոկհոլմից, իւ-
 ղել տուեց երկու ատրճանակ եւ ապա մի քա-
 նի անգամ փորձի համար արձակեց ատրճա-
 նակները: Նա բարձրահասակ, մօտ երեսուն
 տարեկան, թխահար, մեծ մորուքով մարդ էր:
 ԼՈՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵՉԷ, Գնդագետ էլօֆ պա-
 հակախմբերի հետ միասին մտաւ Մեֆիկինդ,
 բայց հանդիպեց զօրեղ հրացանաձուլի մեկ
 քաղաքագետ զօրքի կողմից, որի ժամանակ
 սպանվեցին 17 ռօբէրներ, իսկ էլօֆ եւ 90 հոգի
 դերի ընկան:

ԿՐՕՆՇՏԱՒ, Գեներալ մտաւ Տրանսիլաւա եւ
 գանվում է այժմ 10 մղոն Նիստրիսիայից հե-
 առ: Մէտուէն 12 մղոն առաջ գնաց Գոսպատա-
 տի ճանապարհով, առանց թնաման հանդի-
 պելու: Օրանժեան ռօբէրները կարմարուժու-
 թեան վերաբերմամբ տարածված լուրերը հաս-
 տատում են գանազան կողմերից: Հաստատ-
 վում է եւ այն, որ Գեներալ զրաւել է Նիստ-
 տրիսիան՝ չը հանդիպելով զինագրութեան:
 Բնդիլ զօրքերը երէկ երկուսուսու գանվում էին
 Կլօլախի մօտ:

5 մայիս

ՄՕՍԿՎԱ: Կաշիրա եւ Միխայլովսկի կայա-
 րանները մէջտեղում խորտակվեց ապրանքա-
 տար դնացքը. փշրված են 35 վազօններ, 3
 կծուկտօր սպանված են:

Պետրովսկո-Բաղուստիսկոլում բացվեցին կա-
 նանց գեղատեսեսական առաջին կուրսերը:
 Վճարն ամբողջ դառնեցաւ համար 25 ռուբլի
 է: Բնակարանի եւ ուսուցիչների համար հանրա-
 կացարանում պէտք է լինարկ ամսական 25 ռու-
 օրէս: Եկատերինա II-ի արձանի բացման
 առիթով հանդէսները կը սկսվեն մայիսի 5-ից
 եւ կը տեսնեն երեք օր:

ԼՕՆԴՕՆ: Նիստրիսիայի մօտ գանվող թը-
 նաման նահանջեց դէպի Կլեբկաբորպ: Բազմա-
 թիւ ռօբէրներ միկելուտըրի եւ Բէթլզէնէի շը-
 վաններից հարցրին Բազմաթիւ անգլիական
 ռէվիզէնտին, թէ ինչ պայմաններով նրանք
 կարող են անձատուր լինել:

Կեղևի Գ. Պրինց Կարլը մարդասպանը
 ընկած է: Նրա անունը միկելով Նորդուլդ է:
 Փորձած սպանութիւնները նա բացատրեց
 մարդկանց վերաբերմամբ ունեցած ատելու-
 թեամբ: Հակառակ նրա ցուցումների իր մտա-
 ւոր ընդունակութիւնների նօրմալ գրութեան
 մասին նա խեղազար է թուում:

ԼՕՆԴՕՆ: Համայնքների ժողովը Բալֆուր
 յայտնեց, թէ դեռ եւս ժամանակ չէ բանակ-
 ցութիւններ սկսել ռօբէրների կառավարութեան
 հետ գերիների փոխանակութեան մասին:

ՀՌՕՄ: Թագաւորը, խորհրդակցելով սենա-
 տի եւ պատգամաւորների ժողովը նախագահ-
 ների ու առաջին մինիստրի հետ, եկաւ այն
 եզրակացութեան, որ հարկաւոր է արձակել
 պատգամաւորների ժողովը արքայական հրա-
 մանագրով: Նոր ընտրութիւնները նշանակված
 են յունիսի 3-ին, վերընտրութիւնները—յու-
 նիսի 10-ին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Այստեղի քաղաքագլուխը քա-
 ղաքային տան մէջ պաշտօնապէս ընդունեց
 հարաւ-աֆրիկական պետութիւնների պատգա-
 մաւորներին եւ հաւատարմեց նրանց, թէ նը-
 բանք արագին ընդունելութիւն կը գտնեն
 ազատասէր ժողովրդի կողմից: Պատգամաւոր-

ները ճանր արտասանեցին եւ դիմում արին
 ամերիկացիներին համակրանքին: Վեռնի ստաց-
 ւանք չենք խնդրում ձեզ պատերազմի մեզ
 համար, մենք խնդրում ենք, որ դուք աւէք
 Անգլիային. կանգնեցէք եւ մտածեցէք:

Սիւրբիլի՝ ԱՆԿՍՏԵՆԻ ԳԱՂԱՅԻՄ
 Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
 ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵՎԱՆՈՑ
Բ. ՆԱԻՍՍԱՐԳԵԱՆԻ
 (Կուլիյա, Վորոնոյի արձանի հանդէպ)
 Ս Դ Ե Ն Ո Ր. Բ Ա Գ Ի Կ Ի Ր Ա Կ Ի Օ Ր Ե Ի Գ:
 Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Բ Բ

Ռ. Ա. Նաւաստիլանց—11-12 ժ. վիրաւոժ-
 թեան, վնասակար (սփիլիս) եւ միզասեռ հիւանդ.
 Վ. Մ. Չիկովսկի—9-10 ժ. աչքի, ներքին եւ
 նեարդային է.
 Չ. Բ. Բարսեւսեանց—11-12 ժ. կանանց եւ երե-
 խաց հիւանդ.
 Ս. Ն. Շալակովսկի—12-1 ժ. սկսնչի, կոկորդի
 եւ քթի է.
 Ս. Պ. Կարապետեանց—1-1/2 ժ. ներքին եւ երե-
 խաց է.

Ե Ր Ե Կ Ո Տ Ե Բ Բ
 Ս. Ն. Շալակովսկի—6-7 ժ. նեարդային (եղջը-
 րարւժութիւն), վնասակար եւ մորթի է.
 Ռ. Ա. Նաւաստիլանց—7-8 ժ.
 Վ. Մ. Մալախովսկի—քիմիական եւ խոշորացուց-
 ան հետազոտութիւն.
 Վճար 50 կ. շքարները ձրի. Համախորհրդի (Կոն-
 սիլիումի) եւ օպիտոյի համար առանձին:
 Օ. Տ. Սակախանի—տանը, ծաղկաւար եւ բժշ-
 կական մարմնավար. դիմել 11-1 ժ.:
 Հիւանդանոցի վերանորոգ.
 133-150 Բժշկական ՆԱԻՍՍԱՐԳԵԱՆ

Տեսականապէս եւ դրժնականապէս սովորե-
 լով «ժողովրդատեսութիւնը» եւ վկայական ստա-
 նալով բժշկից, ընդունում եմ մանուկներին
 ծաղիկը կարելու. շքարներին ձրի. Յերկիվայ
 12—3 ժամը: Հաւարար, Գէօրգելսկի փող № 8.
 Ջաննիկայ՝ Ա. Սիւրաբեանց

Բ ա ց վ ա ծ է

ԼՈՒՍՆԵՎԵՐՆԵՆԻ ԳՈՐԾԱՐՄԵՆ

ՏԻԿ. Ե. ՄՈՒՇԵՂՆԵԱՆՑԻ
 (Дворцовая ул. д. 17, Двор.)

Ընդունվում են լուսանկարչական եւ նկարչա-
 կան ամեն տեսակ պատւէրներ (մեծացիներ, ներ-
 կել եւ այլն): Պատուէրները կատարվում են
 նուրբ եւ շատ արագ: Աշակերտներին եւ
 զինուորականներին կը լինի զգալի
 զիջում: Բարձրագույնը Այլընտրանքով
 լում եւ կարգում: (Ն. Ե. Կ.) 1—3

Կերակրի, մայիսի 7-ին, թիֆլիսի ժողովարանի
 ամարային ընկերութեան, յօգուտ կանանց
 Աւետարանական-լուծարական ընկերութեան
 անկիւննոցի տեղի կունենայ

Զ Ր Օ Ս Ա Ն Ք,

զանազան իրերի վաճառումով, կեղերական
 պատգամախօսով, երկխոսական խաղերով, ըն-
 ժամերով եւ այլն: Զբօսանքի ժամանակ կաձեն
 երկու խմբեր: Սկիզբը ժամը 4-ին, կէսօրից
 յետոյ: Մուտքի վճարը 20 կ., երեխաների հա-
 մար 10 կոպէկ: 1—1

ՄՈՂՂՈՒԿ Ի Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՍ ԵՎԵՂԵՑՈՒ

ՀԱՄԱՐ
 հարկաւոր են երկու քահանայ: Պաշ-
 տօնը յանձն առնել ցանկացողները կարող են
 պայմանները իմանալ եկեղեցու երէցիոսի պ.
 Սերովի Գանձուղանից եւ յայտնել նրան ան-
 ղեկութիւններ իրանց ուսման եւ անցեալ գոր-
 ծունէութեան մասին: Առաջարկողները պէտք
 է ձեւարանի կամ ներսիսեան դպրանոցի դա-
 րնթացքը աւարտած լինեն: Ընտրվել կարող
 են նաև ուրիշ տեղերից Մոզղոկ տեղափոխվել
 ցանկացող քահանայները: 4—5

Կենտրոնական դրավճառանոցում ծախվում են
ԼՆՈՒՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
 ԱՅՑ ԹԻՒՐԳԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . . . 60 կ.
 ԺՈՂՂՈՒՐԻ ԿՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ
 ՄԵԶԱՆՈՒՄ 20 կ.

КАПИЛЕРИНЪ
 НОВОЕ
 СОВЕРШЕННО
 БЕЗВРЕДНОЕ
 СРЕДСТВО
 ВОЗВРАЩАЕТЪ СІБДЫМЪ
 ВОЛОСАМЪ
 ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЬ
 ЦѢНА 2 РУБ.
A.CIYиK

Մ 109.538

Լ. Խ Ա Ն - Ա Ղ Ե Ա Ն Ց Ի
 ա.ա.թ. էլեկտրորդ զինեղ-ցերեկ իՆՔՆ ԻՐԱՆ շուր է բարձրացնում ցածր տեղերից վերել:
 Դիմել՝ Լ. Ханъ-Агову, Тифлисъ, Великокомяжеская ул., 37.

Լ. Խ Ա Ն - Ա Ղ Ե Ա Ն Ց Ի
 Գիւղատեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կոպէկ: 1—30

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԿԱՎԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՆԻՑ ԲԱՅՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
 շաբաթը մի անգամ:

Եւ հալատակը՝ Բաթլումից Մարսէլ, մանկով Տրապիզօն, Սամսօն եւ Պոլիս Մեկնում է
 Բաթլումից՝ չորեքշաբթի, 10/23 մայիսի ԱՆԱՏՈՒ չորսնասը, նաւագետ ԲԻՍԵԿԻ: Եւ այսպէս
 շարունակարար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
 Բաթլումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ արվում են սովորականից
 պակաս գնեցով:
 Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթլումի եւ Անտիպոլէի մէջ, ընդու-
 ներով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
 Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ռոսնալու հա-
 մար թող բարհաճնէ զիմը ընկերութեան գործակաւորներին:
 ԲԱՅՈՒՄՈՒՄ—պ. վիկտոր զ'Արսօն, Նաբէլէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարի-
 կինդանեանին, Սիօնի փող. Սոլախարուխօյի եւ Մայսուրաձէի քարվասարա: ԲԱՅՈՒՄ—հըը.
 Վ. Եւ Ի. Մուլիսիանեանին, Նաբէլէժնայա փողոց, տուն Կրասնիկովսկի, № 27: ՆՕՎՕՐՕՍ-
 ՍԻՅՍՎ—Վաղիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Կ. Կ. շ.) 17—20

Այս տարվայ ապրիլի 20-ին, Սօլախարուխօյ փողոցների անկիւնում, իշ. Բէհ-
 բուլետանների տանը բացված է

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԴԱՂԼԻՃ,

որ կատարում է հրապարակական վաճառում ամեն տեսակ շարժական կաշքերի՝ կառավարչա-
 կան դիւանատների, պայտօնատար անձերի, կրեդիտային հիմնարկութիւնների, փոխատու դրա-
 վարիչների եւ մասնաւոր անձերի յանձնարարութիւններով:

Աճուրդով վաճառումն կատարվում է դրա համար յատկացած առանձին դահլիճում,
 բայց իրաւունք է արվում վաճառել նաև կաշքերի տիրոջ ընկալարանում, կրպակներում եւ
 մարզայիններում:

Մանրամասն պայմաններ կաշքերը դահլիճ բերելու, պահելու այնտեղ եւ ի վաճառ հանե-
 լու համար, գրված են «Թիֆլիսի աճուրդի դահլիճ» կանոնադրութեան մէջ, որ կարելի է
 ստանալ նոյն դահլիճում: 4—5

Մ Ի Օ Ր Ի Ո Ր Դ

որ աւարտել է պրօգրիմագիւն, ցանկանում է
 լինել անայն ուսուցչուհի՝ ազնիւ ընտանիքի
 մէջ: Պայմանների մասին զիմել.—Нахичевань
 на Дону, 29 линия, № 6. Р. И. В. 3—3

ՄԱՆԿԱԲԱՐԱՃՈՒՅԻ ՄԱՍՍԱԺԱՍԿԱ
 ՕՐԻՈՐԴ ԿՐԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ
 Հասցէն՝ Красногорская ул. № 14. 16—21

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
 «Մ Ի Ղ Ե Ո Ր Դ»
 (Посредникъ)
Դ. Ի. ԵՆԿԻՄՕՎԻՉԻ
 Պուշկինեան պատմ., Թեմաչվի քարավան-
 սարայի հանդէպ:
 Ծախվում են տներ, հողարածիներ՝ գործարան-
 ներ շինելու համար, քաղաքում եւ քաղաքից
 դուրս՝ գուտաներում: Ասարանոցներ, նաւթա-
 ղուկ հողեր: Մանրամասնութիւնների համար զի-
 մել գրասենակ: № 2. 0—26

Ընդունվում է բաժանորդագրութիւն
ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
 Ա ռ ձ ե ո ն
ՈՒՍՈՒՆԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ
 առաջին մասի համար
 (160 էրես փոքրիկ)
 Բաժանորդագրել 1 ռ. 20 կ.
 Դիմել Թիֆլիսէ. Т. Н. Иоаннисианц
 Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել Հրատարակ-
 չական ընկերութեան գրասենակում (Друцъ Мелх-
 овская, д. Тамашева), պ. Գ. Վալտեանի մօտ
 (շ.) 3—5

Բ Օ Ե Ա Պ Ե Ց
ԳԵՈՐԳ ԹԵԿԷՆՍԵՆ
 (Պետրոպոլից)
 Այս առաւ կովկասեան հանքային ջրերում կըն-
 դունի հիւանդներ ներքին հիւանդութիւններով
 Հասցէն՝ Ессентуки, д. Везпалова (ПРОТИВЪ
 парка). 4—6

ՅԻՆԵՐՐԱՆՆ-ՑԵՆԻԿԱՆ ԲԻՐՈ
Իմեներ Ն. Բ. Պասսեկի
 Тифлисъ, Михайловская ул. № 116.
 Հասցէն՝ հեռագրիների համար. Тифлисцо—
 Пассеку.
 ՏԵԼԷՓՈՆ № 642.

ԿԱՆԱԼԻՉԱՑԻՍԱ, ՎԵՆՏԻԼԵԱՑԻՍԱ
 Ե ՏԱՔԱՑՈՒՄԸ
 ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ Ե ՍԱՐԳԵԼ
 ա մ ե ն տ ե ս ա կ
 տիրերիցներ, խողովակներ, մեքենա-
 ներ եւ ջրհաններ:
 Կ Ա Ռ Ո Ր Ց Ա Ն Ե Լ
 երկաթ է կաժաւոր ջներ
 եւ սնակներ:
ՑԵՄԵՆՏ ԿԱՃԱՌՈՒՄ
 (Կ. Կ. շ.) 97—100